ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-19-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2020թ. դեկտեմերի 17-ից 19-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ հետագա գործունեության հետ կապված հարցերը քննարկելու նպատակով:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարի տեղակալ, Երկաթուղային տրանսպորտի պետական գործակալության ղեկավար Վ. Տոկարևի հետ հանդիպմանը քննարկվել են «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի՝ ստեղծված պայմաններում զարգացման մի քանի սցենար:
   Այցի ընթացքում մասնակցել եմ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ տնօրենների խորհրդի նիստին. քննարկվել են 2020-2024թթ. ներդրումային ծրագրով նախատեսված ծախսերի ավելացման հարցը՝ առնվազն 39 մլրդ դրամի չափով: Քննարկման արդյունքում ծրագիրը հավանության է արժանացել:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել ՌԴ տրանսպորտի նախարարի առաջին տեղակալ, Օդային տրանսպորտի դաշնային գործակալության ղեկավար Ա. Ներադկոյի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է Ավիացիոն միջազգային բյուրոյի կառուցվածքին վերաբերող նախագիծը, որը երկկողմ հավանության է արժանացել և ենթակա է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության վարչապետների ստորագրմանը: Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հնարավորինս սեղմ ժամկետում նշյալ նախագիծը ներկայացնել ստորագրման:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Այցի արդյունքերով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
   Շարունակական աշխատանքներ տանել ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

21 դեկտեմբերի 2020թ.